Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի Ավշենի Մ. Խամոյանի անվան հիմնական դպրոց

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Արագածոտնի մարզի Ջամշլուի հիմնական դպրոցի, Սիփանի Ֆ. Ուսըվի անվան միջնակարգ դպրոցի և Ավշենի Մ. Խամոյանի անվան հիմնական դպրոցի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Արագածոտնի մարզի «Ավշենի Մ. Խամոյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի մարտի 28-ից մինչև ապրիլի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 13:00-ին, Արագածոտնի մարզի «Ավշենի Մ. Խամոյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ, Արագածոտնի մարզ, Ալագյազ համայնք, գ. Ավշեն 1-ին փողոց, շենք 6 հասցեում

Տեղեկությունների համար դիմել՝

1.Էլմիրա Մարալչյան, հեռ 093232183,

2.Ալմաստ Հսոյան, հեռ. 098570445,

էլ հասցե avshen@schools.am